



բաց անել նորա աչքերը՝ կադարեալ իրողութիւնները տեսնելու համար. ամեն անգամ երբ ուժգին զարկերով մամուլը կարողացել է հալ ազգի միտքը իւր առանձնութիւնից շուրս բերել և շփել նորան ընդհանուրի հետ, շորանով իսկ ցոյց տալ նորա համեմատական ուժը՝ ընդհանուր մարդկութեան ծառայելու և մարդկութիւնը իրեն ծառայեցնելու, այդ ամեն անգամները կազմած են մեր ժողովրդի զարգացման մի-մի շրջանները»:

Եւ երբ, մեր այս տողերը առաջ բերելուց չետոյ, վկայում էք թէ Մուրճը «իր խոստումը կադարած է», չսիրո՞ք արդեօք ձեր ամբողջ շուրսածը շարտրէիք համապատասխան ձեր այդ վկայութեան? Որովհետեւ այդ կէտն է ամենից կարևորը: Բայց շուք այդ կերպ չէք վարել. դուք երբ որովհետեւ ձեր ասածը օրինաւոր կերպով հիմնաւորելու համար Մուրճի տասնամեակ հատորները չէք ունեցած ձեր ձեռքի տակ:

Մի այլ տեղ ես շուք ասում էք.

«Աններելի է խոստովանել որ Մուրճը իր կարևոր տեղն ունի Կովկասեան» (միայն Կովկասեան?) «ճալ գրականութեան մէջ»:

Եւ ապա՝

«Եւ այդ» (=Մշակի. բայց ինչու միտն Մշակի!) «անիրաւ հակիրութիւնը» (կամենում է ասել՝ հակառակութիւնը, թշնամութիւնը), «արժանիք մը ևս կ'աւելցնէ պ. Արասխանեանցին որ, հակառակ նիւթական անձուկ պալմաններու, հակառակ անխնայ շարունակական հալածանքի մը, կրցած է, գեղեցիկ լամառութեամբ ու անձուիրութեամբ մը, տոկալ և իր գործը կանգուն պահել»:

Այս վկայութիւնն էլ ինքն ըստինքեան շարձեալ մի ճշմարտութիւն է. բայց ցաւը սա է, պ. Չօպանեան, որ շուք հար-հար ճշմարտութիւններ ճանաչել ու խոստովանել գիտէք, բայց այդ ճշմարտութիւնների իրար հետ ունեցած պատճառական կապերը խոյս են տալիս ձեր ըմբռնողականութիւնից: Դուք, օրինակ, պէտք է ըմբռնել կարենալիք, որ այդ «տոկոսութիւնը» և «անձուիրութիւնը» այլ պատճառ չեն ունեցած բայց եթէ ահա «խանդավառ գաղափարապաշտութիւնը», որով տոգորւած շուրսածները շուք տեսած էք Հիւսիսափայլի մէջ, բայց որ աչք չէք ունեցած կարդալու Մուրճի մէջ. դուք երբ որովհետեւ մէկը վաղուց անցած գնացած է, միւսը կենդանի է, շեռ շար ժամանակ ունիք կարդալու... Դուք, որպէս թուում է մեզ, չէք ըմբռնած որ եթէ Մուրճը կարողացել է տոկալ, տեսլ, շար խորին պատճառական կապ ունի ահա գաղափարական գործի հետ, որի առթիւ շուք վերը վկայեցիք թէ Մուրճը «իր խոստումը կադարած է»: Ուղղութիւնն է լալթել, պ. Չօպանեան, ոչ անհատի լամառութիւնը...

Եւ պատճառական կապեր չըմբռնելը միայն շորանում չէ երևում, այլ ամեն քալափոխում, Մի այլ տեղ շուք շարտրարում էք թէ՝

«էականը ինձի համար սա իրողութիւնն է թէ Մուրճն է եղած այն առաջին ամսաթիւերը որ այսքան ընդարձակ ու լայնոգի ծրագիր ունենար».

Եւ, ի հարկէ, ծրագիր ասելով շուք հասկանում էք հրատարակութեան իսկական բովանդակութիւնը, կեանքի ու գրականութեան վերաբերեալ շոշափած խնդիրները բազմակողմանիութիւնը. չէ որ ինքեներդ էք վկայում թէ՛

«Մուրճ՛ին մէջ երեցած են սուրբ թուով տեսութիւններ գիտական, ընկերական, իմաստասիրական, գեղեցկագիտական, գրական հարցերու մասին, թարգմանութիւններ (այս ու այն հեղինակներից), ուսումնասիրութիւններ օտար մեծ գրագէտներու վրայ»:

Մենք կը դառնանք այն խնդրին թէ ինչու այդ շարքի մէջ շուք այնքան չեշտում էք թարգմանականը, օտարը, բայց ոչ հայ հեղինակների ինքնուրույն գործքերը, հայ գրագէտների վրայ սառու մասիրութիւնները, Բայց յեռ միայն ձեր վիշածները Մուրճ՛ի արժանիքը համարելով՝ չէ որ շորանով է որ, ըստ ձեզ, «Մուրճ»ը իր խոստումը կատարած է». բայց շուք ինքեներդ մի քիչ չետոյ ցանկութիւն էք չափում որ մեր «չուրջը խմբած գրական ութերը» այլ ուղղութիւն բռնեն. շուք ցանկութիւն էք չափում որ Մուրճի շուրջը խմբած գրական ութերը «այդ («թարգմանական») ուղղութիւնը ձեռնարկեն և չառաջ տանին»: Շատ զարմանալի մարդ էք. Մուրճ՛ի աշխատակիցները ամեն մէկը իւր գիտցածովն է օգտակար. իսկ շուք կամենում էք որ նոքա իրենց գիտցածը մի կողմ դնեն ու ամենքն էլ զբաղեն թարգմանութիւններով «օտար գրականութեանց գլուխգործիցներու»?

Չէ, ձեր մտքերը չփոթ են, պ. Չօպանեան: Անցնենք:

Անցնենք տեսնելու թէ որն է ձեր ակնկալութիւնը «Մուրճ՛ի երկրորդ տասնամակից, այսինքն թէ ինչով պիտի նշանակելի լինի Մուրճ՛ի և սորա հետ «հայոց արեւելեան գրականութեան նոր շրջանը»: Խոստովանում ենք, որ ձեր իղէալը Մուրճ՛ի ընթերցողների առջև բանալու համար մենք համակում ենք տատանումքի մի անորոշ զգացմունքով, որովհետև շէ՛ք վերջապէս այդ ձեր ակնկալութիւնը արդէն չափից շուքս աշքատ է բովանդակութեամբ, որպէս զի կարող լինէր պատիւ բերել ոչ միայն որ և է հրապարակախօսի, այլ և որ և է «գրագէտի» առհասարակ:

«Արեւելեան հայերէնը անշուշտ սկսած է դադրիլ երբեմնի այլանդակ խառնուրդը ըլլալէ, ուր ամեն բան կար բաց ի հայերէնք. օտար բացատրութեանց թարգմանութիւնները մէկդի կը դուրս, համաձայնութիւնը կը ձգտի ձկունութիւն առնելու. բայց յեռ սկզբնա»

տրութիւն մըն է. և հարկաւոր է ուժեղ օրինակ մը, որպէս զի կովկասեան գրաբարբառը հայերէն ըլլալ. Մուրճ՛ը կրնա՞յ արգիլել որ իր մէջ հրատարակած լօղածները պարունակեն ու է օտար բառ, ու է օտար բառ. մեր ուսուսհայ եղբայրակիցները հասկնալու են վերջապէս թէ հայերէնը ունի բոլոր հարկաւոր բառերը բացառելու համար ամեն տեսակ գաղափարներ և թէ բացի այնպիսի օտար բառերէ որոնք հաւացած կրնան նկատուիլ հալ լեզուին շէմ հաջողանք մըն է օտար բառերու գործածութիւնը: Մուրճ՛ը, և անոր շուրջը հաւաքուած կովկասեան գրագէտները, պիտի ուզեն այս գործը որոշաբար և գիտակցաբար կատարել, այն ատեն իրական նոր շրջան մը բացուած կ'ըլլալ արևելեան հայոց գրականութեան համար, և Մուրճ՛ի չափորդ տանամեակը կը փոնուի ալլապէս նշանակալից հանդիսաւորութեամբ մը»:

Մեր բարեկամներից միւնը, պ. Չօպանեան, կարդալով ձեր լօղածը, որը վերջանում է այդ փողերով՝ սրամտօրէն բացադանչից՝ «ասա էժան ձեռք բերուող փառք»! Որովհետև, իրօք, ինչ կարող է աւելի հեշտ բան լինել մեզ համար, քան վերցնել ու Մուրճ՛ի մէջ բոլոր օտար բառերը փոխարինել թէ բառգրքերից քաշած և թէ վերջապէս մեր հնարած հայերէն բառերով? Մենք այդ պաշտօնը չաճախ իրօք կատարում ենք, ինքներս շատ շէմ լինելով օտար բառերի անտեղի գործածութեան, շատ ու շատ շէպքերում օտար բառերի տեղ շնում ենք հայերէնը—գրածքը ընթերցողներին կարելիին չափ ղիրամատչելի շարձնելու համար. բայց երբէք չենք երազել թէ շորանով մենք մեր գրականութեան համար նոր շրջան ստեղծելու վրայ ենք և որ շորանով իսկ նախապատրաստում են Մուրճը «ալլապէս նշանակալից հանդիսաւորութեամբ մը» փոնելու պատուին արժանացնելու համար...

Ձեր այդ «հիմնական» գաղափարի հետ լաւ զոյգ է բռնում ձեր ունեցած գաղափարը թարգմանական գրականութեան մասին առհասարակ և թարգմանական բաժնի մասին մի հանրալին ամսագրի մէջ մասնաւորապէս: Ձեր հասկացողութեամբ թարգմանականը պէտք է կազմի մի գրականութեան և մանաւանդ մի ամսագրի ամենաէական մասը: Այդ պատճառով է որ ինքնուրոյն հեղինակութիւնները Մուրճ՛ում ձեզնից հազիւ խլում են մի-երկու փող թուոցիկ վիշափակութիւն, մինչդեռ թարգմանականին շուք ներում էք սիւնակներ, Աչո, ձեր լօղածից երևում է որ շուք կատարելապէս գժուած էք թարգմանութիւնների վրայ: Որ մենք թարգմանականը գնահատել գիտենք, ապացոյց այն թարգմանութիւնները Մուրճ՛ում, որոնց համագումարը կարող է մի տանեակ լաւ հարորներ կազմել: Բայց մենք թարգմանականը այն մտքով չենք գնահատում ինչպէս

Դուք» ձեզ համար թարգմանական գրականությունը Դարձեալ գլխաւորապէս ըզու ղկելու, ո՞՞ զարգացնելու խնդիր է:

«Բարձրագոյն՝ գրականութեանց գլուխ-գործոցներուն թարգմանութիւնը (ասում էք Դուք) լաւագոյն ստորաբար պիտի ըլլայ Կովկասեան գրականութեան մէջ «գրելու արեւոտը» զարգացնելու:

Գրելու արեւոտ ասելով Դուք ո՞ն էք հասկանում: Բայց Դուք արդէն սարսափելի ոճամոլ էք: Ո՞՞ ինչ Դուք զոհում էք միտքը և ճշմարտութիւնը: Դուք աչքեան ոճամոլ էք, որ Արաքսում որպէս Բակուրանի չօւտածը «Մի տեսութիւն հակական Կիլիկիոյ հարսութեան զերազ» թարգմանում էք «պատմական ուսումնասիրութիւն մը Բակուրանի ցեղակից հակական թագաւորութեան վրայ»: Ա՛հ, ինչ սիրուն ո՞՞— «ցեղակից հակական թագաւորութիւն», փոխանակ՝ «Կիլիկիոյ հայոց թագաւորութիւն», չէ որ պէտք է միտքը սքօշել, ընթերցողին անորոշութեան մէջ գցել: Ձեր ոճամոլութեան շար նմոյշները տեսնելով, մենք շար ենք վախենում որ, չիշտակելով ուստահացոց նախորդ մեծ ամագիրներէրջ Զիւսիստիայլը և Փորձը, Դուք ձեր ո՞՞ կանոններին հակառակ էք Դարած նաև Կոռնկը չիչելը. ախ, պարբերութիւնը մի-երկու վանկով կ'երկարէր, չէ:

Սակաւն, ձեր ոճամոլութիւնը մի փորձանք է ոչ միայն ձեզ այլ և մեզ համար. Դառնանք խնդիրն:

Մինչդեռ թարգմանական գրականութեան մէջ Դուք ո՞՞ զարգացնելու միջոց էք տեսնում, մենք՝ Դեռ աչք թարգմանական գրականութիւնը նախ և առաջ ազգի կրթութեան օժանդակ միջոց ենք ընդունում: Արհաչեացքների մէջ աչք մասին ահագին տարբերութիւն կալ. ձեր տեսութիւնը տանում է Դէպի թարգմանութիւնները անխորի. ձեր տեսութիւնը ձեւած է գրագէտներին ո՞՞ մէջ կրթելու համար. մերը՝ թարգմանութիւնները ժողովրդի պահանջներին ծառայեցնելու համար: Ձեզ համար կարելի է ասել թէ ժողովուրդ չկալ, այլ կալ «գրագէտներին» Դասակարգ. Դուք աւելի սորանով էք զբաււած քան ժողովրդի կարիքներին խնդրով: Թարգմանականի համար Դուք խնդիրը պարզած էք համարում, երբ մատնանիչ էք լինում «օտար գրականութեանց գլուխ-գործոցներին» վրայ. իսկ մեզ համար թարգմանական գրականութեան խնդիրը մի բարդ խնդիր է, որի վրայ արժէ առանձին մտածել, նորա համար ծրագիրներ պատրաստել, աչք ծրագիրները քննադատութեան առարկալ Դարձնել: Ո՞՞ ինչ վրայ սիրահարւածներին գործ չէ աչք, հարկալ, պ. Չօպանեան. (թէ և Դուք, փակագծի մէջ նկատենք, մի աններելի անձնապատանութեամբ «Արաքս») մէջ կարծում էք գրած լինել «թերևս ամենէն մաքուր հայերէնն զոր ուստահալք ունին աչք վալրկեանիս». մինչդեռ մենք բաց ենք անում նորա վերջին գրքի մէջ

ուպած Դոստոևսկու «Մեռեալների փանից լիշարակարանը» և մի-երկու երես կարդալով համոզում ենք որ յա մի ոճիր է թէ հեղինակի և թէ մեր արդի գրական լեզվի յէմ)։ Օտար գրականութեանց գլուխ-գործոցները իսկապէս վաչելիլ տալու համար հարկաւոր է հաչերիս մի շար պարարտ հոյ, որ կարող է մեզ տալ հարուստ մանկական, հարուստ պատմական և հարուստ ժողովրդական գրականութիւնը ու յորա համապարասխան ընթերցողների բազմութիւնը։ Այք տնկելով օտար «բարձրագոյն գրականութեանց» գլուխ-գործոցների վրայ մենք շար հետու չենք գնալ։ Շիլլէրը մեզնում սկսեց թարգմանել յեռ ևս Հիսիսափայլում քառասուն տարի առաջ, երբ յեռ կարգին լեզու անգամ չունէինք. նոյն Շիլլէրը շար աւելի կատարեալ հաչերէնով և աւելի սիստեմականութեամբ թարգմանեց Փորձի մէջ սրանից քսան-քսաներեք տարի առաջ, երբ, կարիլի է համարձակ ասել, ոչինչ չկար կատարած մանուկների ու պատանիների և ոչ էլ ժողովրդական ընթերցանութեան համար։ Միթէ յորանով մենք աւել ենք ուզում թէ, օրինակ, Շիլլէրը չպիտի թարգմանէր Բնառ ոչ. այն գործքերը, որոնց թարգմանութիւնները չարուկ տաշանք են պահանջում, գործքեր, որոնց համար թարգմանիչները իրենք մի առանձին, անդիմադրելի հակումն ունին, այսպէս ասած՝ իրենց ոգեկան կեանքի խնդիր է ալշ, յոցա համար օրէնքներ չեն գրում. ալշպիտիները՝ գիտենան էլ թէ ուպագրող չի գտնելու, աչնուամենայնիւ կը նւիրեն ալշ գործքերին՝ ներքին ձաչնի ուժով։ Աւ երբ նոքա ներկաչացնում են տաշանչաւոր թարգմանութիւններ—գրականութեան շահը պահանջում է նոցա ուպագրել։ Բայց յոքա հաղազիւտ են։ Դորա շնորհիւն է, որ ալսօր ունինք Շէքսպիր, բայց չունինք որ և է ալ հեղինակի յասական թարգմանութիւններ։ Աւ ալշ ալշպէս լինելուցն է որ մի ամազրի կեանքն ու գործունէութիւնը չի կարող կապած լինել ալշպիտի բացառիկ երևութների հետ։ Մի ամազրի յերը ալշպիտի գործքերի վերաբերմամբ պիտի կաչանաչ երեցածը գնահատելու, որ աւել է թէ քննողատուծեան մէջ, Բնառ հարկ չկաչ որ մի ամազրի անպարձառ ինքը ուպագրէ ալշպիտի գործքեր. բաւական է թէ ամսագիրը նկատէ, ձանաչէ, և ոչ թէ նախանձող լինի ալլուր երեցածներին։ Մի ամազրի արժէքը գեղեցիկ գրականութեան վերաբերեալ չպիտի չափել նրանով թէ ինքը որքան կատարեալ գործքեր ուպեց, ալ նրանով թէ որքան նա իւր հաչեացքներով ու ձանաչողութեան ուժով նպատարաւոր ու յորիչ եղաւ կատարեալի երևան գալուն ու հաստատուելուն, և թէ որքան նա կարողացաւ արգելք լինել գրական որոմի չքանալուն։ Այս է աւելի կարևորը, և ոչ աչն թէ ինքը որքան կարողացաւ ամենակատարեալը տալ մի բան որ շար չաճախ նոյն իսկ լոկ նլութեանի խնդիր է...

Ոչ. պ. Չօպանեան, թարգմանական գրականութիւնը լոկ ամենաբարձր գլուխ-գործոցների թարգմանութեան խնդիր չէ. իսկ մի ամազրի համար

այդ թարգմանչական գործունէութիւնը չէ որ պիտի նորա զլխաւոր արժանիքն ու գլխաւոր շէրը որոշէ: Որպէս զի աւելի կոնկրէտ խօսենք—թարգմանական գրականութեան համար Մուրճը չար մեծ ծառայութիւն է անում հրատարակելով մեր մի ծանօթ աշխատակցի չօղւածներն (սորիլխտամու կրիտիկոսների համար թերևս ծանրատաշտուկ!) երկար շարքը շեռահասներն ընթերցանութեան մասին, քան եթէ շորա փոխարէն Մուրճը մի տասնեակ վէպերի վիպակների, զրոյցների թարգմանութիւնների տւած լինէր: Այդ ասում ենք բնաւ չմոռանալով և ոչ թող տալով ուրանալ որ Մուրճը ցայժմ տւած է շուրջ վիսուն մեծ ու փոքր թարգմանական գործքեր գեղեցիկ յարուցիւնից (չհաշւած մանր սոսնաւորները), որոնց համապումարը կը կազմէր մի տասնեակ սիրուն հատորներ...

Ամսագիրը, ուրեմն, որպէս առհասարակ, նաև թարգմանական գրականութեան նկատմամբ ոչ այնքան իբր չտեմարան պիտի ծառայի, որքան յրդիչ և ուղեցոյց օրգան. իւր հրատարակած թարգմանական վէպերը, զրոյցները, յրամաները պէտք է ունենան յրդիչ կողմեր, նախած թերթի շիտաւորութիւններին իւր ժամանակաւ սերնդի և գրականութեան նկատմամբ: Ամսագիրը ոչ այնքան գրականութիւնը հարստացնելու է գալիս, որքան մտքեր պատրաստելու ու գրականութիւնը ուղի ճանապարհի վրայ շնելու, այն հարստացնելու ուղին հարծելու համար: Այսօր, օրինակ, գլխաւորապէս Մուրճի շնորհիւ, բաւարար չափով հայ գրականութիւնը ունի Լերմոնտով և Պուշկին, բայց Մուրճի վաստակը այս յէպքում ամենին այն չէ, որ նա Պուշկին ու Լերմոնտով տեսց հայ գրականութեան, այլ այն, որ մի յժւար գործի համար՝ մի թարգմանչական ուժ առաջ մղեց, որը, եթէ չլինէր Մուրճը—հաւանական է որ ասպարէզ չգար կամ չըճանաչէր հասարակութիւնից, կամ վերջապէս զրկւած մնար կատարելագործելու համար անհրաժեշտ հանգամանքներին:

Մուրճի թարգմանական գործունէութիւնը, ուրեմն, որպէս տեսնում էք լոկ տպագրական, հրատարակչական գործունէութիւն չէ, այլ մի բան աւելի. մի յէպքում մենք հրատարակում ենք՝ կամենալով հայոց ու մի յրացի (օրինակ վրացի) ժողովրդի միջև աւելի ուղիչ հասկացողութիւն հաստատել, խորտակելով որ և է նախապաշարմունք. մի այլ տեղ մենք տպագրում ենք մի՛ մեր հասկացողութեամբ չուսադու ուժ առաջ մղելու համար, որը, առանց Մուրճի այլ կամ այն կերպ պիտի վնասէր. մի այլ յէպքում մենք տպում ենք մեր հայ ընթերցողներին շեռ ևս անծանօթ բայց տաշանդաւոր օտար զրոշի հետ առաջին անգամ ծանօթացնելու համար. մի այլ յէպքում ևս՝ պարմաւածքի տենդենցիակի համար, և այլն և այլն. և այդ ամեն յէպքերում Մուրճը կատարում է մի ներգործական շէր, որը, պ. Զօպանեան, սովորաբար խոս է տալիս ոչ միայն սովորական ընթերցողներին, այլ չաճախ նաև ի պաշտօնէ կրիտիկոսներին կամ քննադատութիւնը իրենց

անհամապատասխան թույլ ուսերի վրայ բարձած գրչակներին: Ինչպէս? Ահա թէ ինչպէս. լսեցէք:

Դուք, պ. Զօպանեան, որպէս չոյս ունինք, թէ և ձեր «խորհուրդներով» կամեցել էք օգրակար լինել առաջմ մեզ, բայց հաստատը սա է, որ Դուք կարողացաք օգրակար լինել միայն... Մշակին, որը այս տասը տարի ճգնում էր որ և է «խորհուրդ» տալու Մուրճին, ու չզիտէր թէ ինչ ասի: Դուք նորան օգնութեան եկաք. և այժմ ահա վերջապէս Մշակը գտած է կարծում ալն բանաձևը, որով պիտի մերձենալ Մուրճին իւր սարսափելի խելօք խորհուրդներով: Թէ և Մշակ'ը, ամօթից, պնդեց թէ Դուք, պ. Զօպանեան, միայն «նոյն եզրակացութիւններն էք արել» ինչ որ նա՝ Մշակ'ը «հարիւր և աւելի անգամ կրկնել է», բայց նորա ալք խօսքերը Դուք այսպէս պիտի հասկանաք, թէ ալք պնդելով նա, Մշակ'ը, «հարիւր և աւելի անգամ»... ստում է: Նա էլ, որպէս ցեհնում էք, ձեզնից չետոյ պահանջում է Մուրճից «մշակած յօւածներ» և «օտար գրականութիւնների ամենագեղեցիկ արտատրութիւնները»—և ուրիշ ոչինչ: Զգուշացէք, սակաւն, պ. Զօպանեան, Մշակ'ի ալք թուլակութեան համար շոշոքորթելու փորձութիւնից: Դա մէկն է ալն բազմաթիւ «օւին»-ներից, որոնցով նա միամիտներից շարերին կարողացել է խաբել «անկողմնակալ քննադատութեան թերթ» հռչակելու համար. և, պ. Զօպանեան, ներեցէք մեզ, բայց պարտաւոր ենք ասելու, Դուք կամ ալք միամիտներինցն էք և կամ—ձեր կարծիքը կեղծում էք: Մշակ'ի համար վաշտց է որ ոչ մի սրբութիւն չկայ, որը հաշտէր անկեղծ համոզմունքի ու շիտակութեան հետ: Նա ամեն ինչ լսալի վրայ է Դրել: Ուշք Դարձրէք ալն բացազանչական նշանների վրայ (==!—!!), որ Մշակ'ը իւր յօւածում (թերթի № 74) ընկերացրել է Փորձ ամսագրի անուն: Գիտէք ալք ինչ բացազանչականներ են. Դուք արձագանք են Մշակ'ի բռնած Դիրքի Դէպի Փորձը՝ վերջինիս հրատարակութեան տարիներից (1876—81) Գր. Արժրունու ժամանակ: Անցել է քսան տարի, և Դեռ Մշակ'ը առանց հարցականների չի կարող տալ Փորձի անունը. այս քսան տարիներում Մշակ'ի մէջ Փորձի անունը եթէ տրւած է՝ ով գիտէ ինչ հարկադրիչ պատճառներ են եղել. բայց տրւած ժամանակն էլ միայն ահագին սոււեր գցելու համար է եղած, և ոչ աւելի բարի նպատակով:

Նւ ինչ էք կարծում, ինչ ծրագիր էր իրագործում Փորձ'ը Նսկ և իսկ ալն, ինչ այսօր Մշակ'ը իւր Լէօ-Բարախանեանով, Քալանթարով, և էլ ինչ գիտեմ քանի-գլուխ (թէ անգլուխ) խմբագիրներով չալտարում է իբր միակ իսկական նպատակ մի ամսագրի. լսեցէք—«Լինել համետ, լինել ազնիւ, թողնել հասարակական կարծիքը շեկավարելու չաւակնութիւնը»:

դալ մշակած լօղւածներ, թարգմանել օտար գրականութիւնների ամենագեղեցիկ արտադրութիւնները» — հա թէ ինչ պիտի լինէր մի ամսագիր ըստ այսօրայ Մշակի՝ Այս ռեցեպտը ուղակի ձևւած է Փորձի վրա: Չարմանում էք, Փորձի մէջ էլ ինչ կար բացի «մշակած լօղւածներից ու օտար գրականութիւնների ամենագեղեցիկ արտադրութիւնների թարգմանութիւններից»: Կարելի է մրցանակ դալ՝ ով միայն կարող է Փորձի հարոյններից շուրս բերել այլ բան քան ինչ Մշակը իւր այսօրայ իրէալ է չարարարում: Որովհետև այն շար չնչին թւով ինքնուրոյն վէպերը, և մի չարտի բանաստեղծի ազգային երգերը, կամ շար աննշան տեղ բռնող ներքին ժամանակակից խնդիրներին վերաբերեալ *quasi* տեսութիւնները չեն փոխում Փորձի ընդհանուր նկարագիրը: Եւ կարարեալ բացակաութիւն հրապարակաստական տարրի, կարարեալ բացակաութիւն «հասարակական կարծիքը շեղվարելու չափնութեան» — և «համետ», մի խօսքով մի «իրէար» այսօրայ Մշակի՝ Գէհ այժմ տեսէք ինչ կարակներ է խաղում այսօրայ Մշակը երէկայ Մշակի հետ. նա բացալանչութիւններ է շնում Փորձի անւան կողքին — որ հարկ վճարած լինի Գր. Արծրունու շիշարակին. և քիչ ներքև նոյն Գրիգոր Արծրունուն վերածնում է Արգար Յովհաննիսեանի իրէալով: Գսան-քսաներեք տարի առաջ Մշակը միայն խաղառակել գիրքեր Փորձին, այժմ՝ նա խորչում է սորա անունից՝ բայց իրէալացնելով նորա իրադրած ծրագիրը, առանց ազնութիւն ունենալու պարզ խոստովանելու աչք Մի բան հաստատ է. այն ժամանակ կենդանի էր Փորձը — պէտք էր կուել նորա շէմ. կուել նոյն իսկ Փորձի հակերէնի շէմ, որը նոյն ժամանակները լաւագոյն հակերէնի նմուշներն էր դալիս, և կուել՝ ստակալի կերպով կարողած հակերէնով իսկ այժմ՝ պէտք է Փորձի ծրագիրը իրէալացնել — կուելու համար այժմ կենդանի Մորձի շէմ, որը հետևում է Փորձից տարբեր ծրագրի... Ինչ խաղք ու կարակ, ինչ պղծութիւն մտքի, ինչ խաղառակութիւն...

Դուք, պ. Չօպանեան, միամտաբար կարծել էք թէ ծառայութիւն էք մարտեցանում ձեր խորհուրդները չխնայելով մեզ. բայց գոնէ պէտք է բաւականալիք շորանով. լաւ «խորհուրդների» համար դուք ձեզ ընկերացնում էք նաև Մշակին. ցաւում ենք ձեզ աչք տեսակ-տեսակ կասկածելի ընկերակցութեան համար. էլ ուրիշ թերթերի անուններ չգիրքէք՝ որ մեր խորհրդատուների թիւը բազմացնէք!

Դուք, պ. Չօպանեան, զուր չէ որ հալոց գրականութեան, և շորահամապարասխան նաև հալոց մի ամսագրի, գրեթէ ամբողջութիւնը կամ գոնէ էութիւնը թարգմանական գործունէութեան մէջ էք տեսնում: Մենք, ինչպէս շարով պիտի տեսնէք, լուրջ պատճառ ունինք հաւարալու ձեր-

անկեղծութեանը աչք խնդրի նկատմամբ: Մշակ'ը, սխանալով ձեզ հետ աչք խնդրում, ընդհակառակը, միայն խորամանկ արևսի շեր է կատարում: Աչք աւելսը գիտէ, զգում է ու խնամքով թագցնում որ մի ամսագրի զլխաւոր արժանիքը պէտք է որոնել ուղղութեան և ինքնուրոյն գրածքների մէջ, և որ մի գրականութեան զինը նորա ինքնուրոյն էութեամբ է որոշում, և որ, հետևապէս, նաև հոյոց գրականութեան մէջ էականը, գնահատելին թէ հազարի և թէ ամբողջ մարդկութեան համար՝ նորա ինքնուրոյն ստեղծագործութիւններն են, արտապատեմ՝ հրապարակաստութեան, բանաստեղծութեան ամեն ժանրերի, գրական ու զիրական քննադատութեան, ամեն կարգի հետազոտութիւնների և ուսումնասիրութիւնների մէջ: Մի քսան րոպի առաջ Փորձ'ը ըստ Մշակ'ի, ոչինչ բան էր, որովհետև հրապարակաստութիւն չունէր. աչքօր՝ Մորձ'ը Մշակ'ի աչքի փուշն է, որովհետև նա հիմնւած է հրապարակաստութեան վրայ: Թողնենք, սակայն, այս նէօ-մշակական աղւէտներին: Կառնում ենք ձեզ, պ. Չօպանեան, և ասում, անք, մենք լուրջ հիմք ունինք հաւատալու ձեր անկեղծութեանը, երբ դուք հալոց գրականութեան էութիւնը թարգմանական գործունէութեան մէջ էք տեսնում: Եւ ահա ինչու:

Ընդհանրապէս ասած՝ արևելեան հալոց գրականութիւնը կազմում են հալ ժողովրդի խորքերը թափանցող հելինակութիւնները, որոնք, աչքապէս ասած, զարգանալով, Կերքից բարձրացել են վերև, և ոչ վերևից ներքև, և աչք իսկ պատճառով նշանաւոր են իրենց ինքնուրոյնութիւնով թէ նիւթի և թէ ճողն իսկ ձևի ու լեզուի կռմից: Արևմտեան հալոց գրականութիւնը, ընդհակառակը, ներկայացրել է նմաւ ողութիւն նիւթի, ձևի ու լեզուի կռմից, և սերունդների գրական կրթութեան վրայ ազդեցութիւն է ունեցած թարգմանական գրականութիւնը, որով և զլխաւորապէս մշակուել է նոյա ոճն ու լեզուն: Եւ հէնց աչք պատճառով էլ արևմտեան հալոց գրական լեզուն կոել-կոպել է թարգմանական գրականութեան ազդեցութեան ներքոյ, մինչդեռ արևելեան հալոց գրական լեզուն զարգացել է ինքնուրոյն գրականութեան հետ միասին, երբէք սորանից ոչ առաջ գնալով և ոչ ետ մնալով: Եւ որովհետև ինքնուրոյն գրականութիւնը գործ է ունեցել կենդանի ժողովրդի և ոչ մի որ և է որոշ շասակարգի հետ, ուստի և արևելեան հալերէնը ոճի կռմից ձգտել է աւելի չարմարել իւր ընթերցողների հանկացողութեանը, իսկ արևմտեանը՝ օտար գրականութիւնների ոճի կատարելութեանը:

Արևելեան հալոց գրականութիւնը ինքնուրոյն զարգացման աչք բնաւորութիւնը ունեցած լինելով՝ արևելեան հալոց լեզուն էլ ճողն զարգացման է հետևել. և, լաւ իմացէք, պ. Չօպանեան, արևելեան հալոց գրական լեզուի վրայ շեռ ևս ոչ մի թարգմանիչ ազդեցութիւն չի ունեցած. ընդառակը, լաւ թարգմանիչները ճողն են ելել մեզնում, ովքեր կարո-

շացել են իրենց թարգմանական գործքերի համար օգտել ինքնուրոյն գրածքների լեզւի հարստութիւնից: Սրաւ լեզուների հետ ծանօթութիւնը գորեւ ազդեցութիւն է ունեցել արեւելան հայոց հրապարակաստական, քննադատական, զիրական, վիպական, բանաստեղծական լեզւի զարգացման վրայ, բայց ոչ թարգմանական գործքերը, ոչ՝ թարգմանիչները իրենք: Այդ աչքան ճիշդ է որ մեզնում, շեռ. աւսօր, արձակ գրածքների լաւագոյն թարգմանիչները շարձեալ նոքա են, որոնք ինքնուրոյն հելլենակութիւնների մէջ ցոյց են տուել իրենց լեզւի հարազատութեան փալլը:

Հերիք լեզւի մասին. տեղը չէ աւելի երկարելու: մանաւանդ որ սա մի ակամալ շեռումն էր բուն խնդրից. իսկ ինչոքով ալն է, որ շուք, պ. Չօպանեան, մի տեսակ կրկրորդական տեղ տալով ինքնուրոյն գրականութեան արտապատութիւններին մի հայոց ամսագրի մէջ, շար հաւատարիմ էք մնացել արեւմտեան հայոց հին յպրոցին, որը, բարշաւոր ենք որ կարող ենք վկայել, թէ ներկայումս տիրապետող չէ թուում մեզ նաև արեւմտեան հայոց մէջ, ուր, վերջին տասը տարիներս, նոցա ցոյց տւած կամքը և եռանդը աւելի ամուր չողի վրայ կանգնելու՝ չի կարող աչքի չընկնել ով միայն բաւականաչափ բարի կամք ունի աննախանձ աչքով մեր արեւմտեան հայոց գրական լաւագոյնութիւնը տեսնելու: Մենք որ նշմարում ենք—նաև վկայում էլ ենք ու ոչ ջունում. բայց, որպէս մեզ է թուում, այդ ալն յպրոցը չէ, որի արդիւնքն է ձեր լօրւածը:

Գուք, պ. Չօպանեան, կրիտիկոսի եղանակ բանեցրած լինել էք կարծում բարձր հուշակ չստացած հելլենակների գործքերը Մուրճի մէջ «անմարսելի ուսումնասիրութեանց, ծանրատարտուկ վէպերու և անհամ բանաստեղծութեանց» («հաղին շէզ») տեսնելով: Եւ որով պիտի համոզուէք որ ձեր այդ խօսքերից ծիծաղելին մի կանգուն անգամ հեռու չէ: Վերցնենք «անհամ բանաստեղծութեանց» («հաղին շէզը») Գուք այդ «շէզից» խնամք էք տանում ջոկելու ձեր հա նաձները՝ Ծատուրեան, Արամ-Չարբզ, Իսահակեան, Դանթ և Գեմիրճեան: Ի՛նչ քիչ բան! թէ արեւելեան խորամանկութիւն է սա, պ. Չօպանեան, «անհամ բանաստեղծութեանց» «հաղին շէզ»ից ջոկել գործքերը մեր սնն աշխատակիցների, որոնց տւածները կազմում են Մուրճի վերջին տարիների բանաստեղծութեանց բաժնի գրեթէ ամբողջութիւնը. որովհետև եթէ էլ աւելի հեռուն երթաք շէպի Մուրճի սկզբնական տարիները՝ շուք պիտի հանդիպէք երկու ուրիշ անունների և, որոնցից ձեր լիւաձները հազիւ թէ խորշին. և շուք կ'լինեն՝ մի Մանուէլեանց, մի Յովհ. Թումանեանց և, եթէ կամենաք, նաև Արշալուս Մխիթարեանց: Մուրճի մէջ այս տասը տարիներում բանաստեղծութեանց մեծ «շէզը» կազմողները լամենաչն շէպս պիտի որոնել չիեանքների մէջ...

Մնում է մի բան միայն.— ընդունել որ ձեր «ոձը» պ. Չօպանեան շաւաձանում է ձեր մորքին: Անիծեալ ո՞ն...

Բայց եթէ զգաք և հրապարակով խոստովանէք անգամ որ ձեր ոնը գալթակղել է ձեզ, շարձեալ մի կարևոր բան պարտք կ'մնաք քննադատական ճշմարտութեանը, որովհետև շարձեալ աչս ոչ-անկարևոր իրողութիւնը բաց կը մնա, որ աչք փշուած անունները անուններ չէին րասը տարի առաջ, երբ Մուրճը սկսեց, և ոչ միայն անուններ չէին, այլ շեռ երբեմն հարկ կար նոցա պաշտպանելու վաչրենի լարձակումների շէմ... Այն եթէ մինչ մի քանի տարի՝ նոր անուններ երևան գան «Աճահիտի» մէջ ու ձեր թերթի սիւնակներում աչք անունները ուժանան և ընդհանուր սեփակա-նութիւն շառնան, այն ժամանակ, պ. Զօպանեան, շուք մի նոր լօշուած գրեցէք. թէ կ'ուզէք նորն իսկ մի քանի «խորհուրդներով» ուժ հասցէին որ լինին շոքա. .

Աչպէս ծիծաղելի կերպով վերջացաւ ձեր «ժանրադաշտուկ... բա-նաստեղծութեանց շէք»-ի ինչիւրը. Գուք ինքներդ ձեր շիշած անուն-ներով ջնջեցիք ձեր գրածը: Բայց ձեր խոստովանութիւնը աչնուամենալ-նիւ մի լառաջդիմութիւն է. որովհետև կար ժամանակ, երբ նոր միայն կեանք մտած բանաստեղծների շէմ լոկ ծաղր էր լսում: Գիտէք ինչու. որովհետև «պէտք էր» Մուրճի շէմ կուել: Աչպէս էին նոքա իրենց հա-չիւներն արել: Գրշուած շորանից՝ նոքա տարածեցին իրենց «ճալածանքը» նաև ոչ մի բանի մէջ «մէջ» չունեցող երիտասարդ բանաստեղծ ոգևորի վրա: Աչք արշաւանքի մէջ առաջին գծի վրալ փալում էր Արծրունին. ախար գրական նոր շարժման տրտալալուութիւններից մէկն էլ երիտա-սարդ բանաստեղծների երևան գալն էր. հերքելը, ուրացումը պառշած զէնք էր համարում, որովհետև շար մարդկանց աչքեր տորան մէջ ևս «անկողմնակալ քննադատութեան թերթի մը» նշաններ կը տեսնեն... Տե-սէք թէ Մշակի կարալութիւնը ուր էր հասել որ մինչև անգամ Մուրճի մէջ իրեն Մշակի ապագալ խմբագիր պարրաստու պարոնը (=Ալ. Քալան-թար) «Նթերցող» համեստ տորագրութեամբ շիմեց մեզ «Նամակով Խմբա-գրին», ուր նա աճալ թէ ինչեր էր չալտնում. պ. Զօպանեան, լաւ կարգացէք.

«...Որովհետև բանաստեղծութիւնները կազմում են Մուրճ ամ-սագրի խնամքով տանուլ բաժիններից մէկը, որի գարգացման վրալ, որպէս երևում է, խմբագրութիւնը առանձին ուշադրութիւն է շարձ-նում, ուտրի թու թուլ տրել ինձ մի քանի խօսք ասելու:

«Մեր ժամանակակից բանաստեղծութիւնը շեռ մանուկ և ան-հաստարդ գրութեան մէջ է, նա աչժմ է սկսում կազմակերպել և նոր նոր միալն փորձեր է անում մտնելու մեր ժողովրդի խորշերը և չօալիւլ մեր հասարակական գործո ի զգացումը. քնների և վրդովմունք-ների ալխարճը: Որանուտոր գրողների, լանգեր լարթողների թիւը մեծ է. բայց և մեծ ջանք է հարկաւոր աչք մեծ կուրից մարգարիտ-

ներ շուրս խելու, նոցա գոնու և նոցա ամբարելու մեր ապագայ բանաստեղծութեան զարգացման ու կազմակերպութեան համար: Կա ի հարկէ շժուար գործ է, բայց, ինչպէս երևում է, Մուրճի խմբագրութիւնը ուրախութեամբ և չօթարութեամբ է տանում այդ, որովհետեւ, ինչու երկու տարուայ փորձը ցոյց է տալիս, նա վարձատրուում է: Այլ մեր համոզմունքը, որպէս և ընթերցողներից շատերի վկայութիւնները միանգամայն մխիթարիչ կարող են լինել Մուրճի խմբագրութեան համար: Մի քանի բանաստեղծներ, որոնք ամիսներ շարունակ զեղծել են իրանց ոտանաւորները այդ ամսագրում, գրուել են իրանց համար հաստատ խորշեր ընթերցողների սրտիւում, ծնեցրել են նոցա մէջ մաքուր, ազնիւ և վեհ զգացմունքներ: Քաջալերութիւնը և անկեղծ համակրութիւնը չէ թողնում կորչելու, սառչելու և ոչնչանալու այդ մեր երիտասարդների առաջին փորձերը: Առողջ քննադատութեան ազդեցութեան տակ այդ նորակազմ բանաստեղծութիւնը կ'ամրանայ և լաւագոյն ապագայի համար հող կը պատրաստի:

«Բայց ինչ ենք տեսնում մեր շուրջը: Առողջ քննադատութիւն, անկեղծ համակրութիւն, ազնիւ վերաբերմունք:

«Գժբախտաբար ոչ:

«Ամբողջ երկու տարի է, որ Մուրճում երևացող նոր բանաստեղծութեան փորձերը զանազան թիւր նկատողութիւնների, կասկածաւոր ակնարկների են ենթարկուում, ակնարկների, որոնց մէջ ի զուր ենք որոնում մեզ հեղաքրքրող խնդրի մասին գործին վերաբերեալ մի խելացի խօսք, մի իմաստալից խորհուրդ, մի նպատակապարմար նկատողութիւն:

«Մէկը այդպիսի քննադատներից (ոմն խ. Ազ-լեր <sup>2</sup>)... աննեւելի կերպով սուեր է աշխատում տարածել նոցա վրայ և աժան կերպով սրախօսելով և ոստումներ անելով՝ չադարարում է Մուրճին իբրև մեղսակից այն անհամութիւններին, որոնցով լիքն են շատ բանահիւանների գրեածքները <sup>1</sup>) և որոնց ամենակատարի և ամենաէական թշնամին այն ամսագիրն է, որ նոցա բարուքելուն նւիրած է և որ իսկապէս որոնում է բանաստեղծութիւն, և որը, (=Մուրճը) չուսով հմ, թէ ուշք չի դարձնիլ (Մշակ'ում երևացող) այն տեսակ ծամածուութիւնների վրայ, երբ, չնուն Ատրկանեանի, Նալբանդեանի,

<sup>1</sup>) Այն ժամանակուայ ծածկանունը խաչ. Մայումեանի, որը երկրորդում էր, ինչպէս ամեն բանում, նույնպէս էլ այդ դէպքում Գր. Արծրունուն:

<sup>2</sup>) Ակնարկութիւն այդ ժամանակ երևցած մի քանի ժողովածուների:

Պուրեանի, Պէշիքթաշեանի, փորձ են փորձում ընդհանուր պարսաւանքով խեղդել և սուբրի մէջ պահել մեր նոր բանաստեղծութեան համակրելի ներկայացուցիչներին:

«Անկեղծ վկայում եմ, մեծ. պ. Խմբագիր, որ սա մի ահազին մեծամասնութեան կարծիքն է, որ այն բանաստեղծ աշխատակիցները, որոնք տեղ են գտել Ձեր ամսագրում, իրանց վրայ զրաւում են ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը և որ առնուազը հասարակութեան այդ մասը լրջութեամբ է հետևում Մուրճի այդ բաժնին: Յոջ ունիմ որ քաջալերական վկայութիւններ ի կարօտ չէք զգում Գուք՝ Ձեր բռնած ճանապարհով անսպաթաք կերպով ընթանալու համար» 1):

Երբ Մշակի այժմեան խմբագրող Ալէքսանդր Քալանթարը Մուրճի մէջ այդ տողերն էր գրում Գ. Արծրունու Մշակի ծանածուծութիւնների մասին, նա, պ. Չօպանեան, ինկատի ունէր Մուրճի անցն ժամանակաշրջանաստեղծ-աշխատակիցներին միայն, որոնք էին՝ Լեոն Մանուէլեան, Ալ. Ծափուրեան և Արշալույս Մխիթարեան. իսկ ձերիչաժներից Շանթ, Ա. Խասակեան, Գերենիկ Գեմիրճեան այդ ժամանակ շեռ չէին էլ երևացել գրականութեան մէջ: Բայց շուք, պ. Չօպանեան, որ այնքան հանգիստ սրտով այժմ ձեր թերթի մէջ մի առանձին տեղ էք յատկացնում մեր այժմեան բանաստեղծ-աշխատակիցներից չորսին 2), շուք հասկանում էք թէ ինչ գրական մթնոլորտի մէջ էր գործում Մուրճը շեռ ևս ութ տարի առաջ, երբ ձեր չիչաժներից նոյն իսկ առաջինի՝ պ. Ալ. Ծափուրեանի անունը՝ Մշակի մէջ, Գրիգոր Արծրունու ժամանակ, խառնուում էր այլ և այլ խալտառակ գրողներ ի կոտրի մէջ որոնց հետ Մուրճը ոչ մի առնչութիւն չուներ. և այնտեղ ալապէս չէր խօսուում նորագոյն հակական բանաստեղծութեան առաջին զարկ տուողների մասին, բայց եթէ երբ հարկաւոր էր, մի որ և է կիսախելագարի ժողովածուի առիթով, ընդհանուր պարսաւի սաւան սփռել Մուրճի հետ կապած նորագոյն գրական շարժման վրայ:

«Անկողնակալ քնդատութեան թերթ մը»... Ի՛նչ հեզնութիւն, պ. Չօպանեան, եթէ միայն ցաւալի չլինէր այն, որ շուք, Պարիզում նստած, եւրոպական հայերի մէջ ձերովսանն չտարածէիք այդքան ծիծաղելի հաչեացքներ մի օրաթերթի մասին, որը տարիներեց ի վեր աշխատում է գաղտուկ կերպով թքածները ետ լիզելով իւր գլուխը կանգուն պահել... Այժմ այժ թերթը հասնետուծիւնը իւր քարոզների գլխաւոր բնաբանն է ընտրել, ճիշտ այնպէս որպէս Տարտիւֆը՝ բարեպաշտուծիւնը...

1) Տես Մուրճ, 1890 թ. № 12, էջ 1788-89.

2) Միշտ, ի հարկէ, մեր սեփական կարծիքը վերապահելով ձեր չիչաժների մասին:

